Անշարժ գույքի շուկայի վերլուծություն

2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե
www.cadastre.am

Բովանդակություն

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 2

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 2

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 9

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն 12

2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 15

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն 15

3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 20

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 20

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 25

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 27

3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 28

3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն 32

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն 37

3.7 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն 46

4 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 52

4.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 52

4.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 56

4.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված վարձակալության գործարքների վերլուծություն 59

5 ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 61

5.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 61

5.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 65

5.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված գրավադրման գործարքների վերլուծություն 68

5.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված հիփոթեքային գրավադրման գործարքների վերլուծություն 69

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2025 թվականի սեպտեմբերին

(վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է՝ հիմք ընդունելով 2025 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալները և անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունները:

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 20,984 իրավունքի պետական գրանցման գործարք:

2010-2025 թվականների սեպտեմբեր ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում.

Գծապատկեր 1.1-1



1.1.2 Հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 31.4 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց ձորի մարզում՝ 1.3 %:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3



Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-1

	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	**2025 թվականի օգոստոս**
Երևան	5,611	17.5%	6,594	19.7%	5,508
Արագածոտն	1,378	-9.3%	1,250	-2.0%	1,276
Արարատ	1,784	2.6%	1,830	12.1%	1,633
Արմավիր	1,579	22.7%	1,937	16.4%	1,664
Գեղարքունիք	1,079	-3.2%	1,044	13.5%	920
Լոռի	1,208	27.2%	1,537	12.3%	1,369
Կոտայք	3,263	17.9%	3,847	9.7%	3,507
Շիրակ	1,069	-14.1%	918	-7.4%	991
Սյունիք	974	-15.3%	825	21.7%	678
Վայոց ձոր	292	-5.8%	275	-3.2%	284
Տավուշ	1,257	-26.3%	927	-2.4%	950
Հանրապետություն	19,494	7.6%	20,984	11.7%	18,780

Գծապատկեր 1.1-4-ում ներկայացված է 2010-2025 թվականների սեպտեմբեր ամսվա անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի.

Գծապատկեր 1.1-4



2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 11.7 %-ով, իսկ 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 7.6 %-ով: Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին գրանցված գործարքների քանակը 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 19.7 %-ով, իսկ 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 17.5 %-ով : Մարզերի քաղաքային բնակավայրերում 2025 թվականի սեպտեմբերին գրանցված գործարքների քանակը 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 6.6 %-ով իսկ 2024 թվականի սեպտեմբերի համեմատ 6.3 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2025 թվականի սեպտեմբերին գրանցված գործարքների քանակը 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել 9.4 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 2.3 %-ով:

1.1.3 Հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 39.0 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.4 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-5-ում և Գծապատկեր 1.1-6-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.1-5



Գծապատկեր 1.1-6

Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի օգոստոս**
1	**Օտարում**	7,152	14.4%	8,179	13.6%	7,202
1ա	Առուվաճառք	4,643	20.3%	5,587	23.0%	4,542
1բ	Նվիրատվություն	2,184	6.1%	2,317	-3.5%	2,400
1գ	Փոխանակում	78	-39.7%	47	6.8%	44
1դ	Օտարման այլ տեսակ	247	-7.7%	228	5.6%	216
2	**Վարձակալություն**	854	14.5%	978	13.3%	863
3	**Գրավադրում**	2,671	23.2%	3,291	17.7%	2,797
4	**Ժառանգություն**	3,442	-2.5%	3,357	8.7%	3,089
5	**Օրինականացում**	261	-69.0%	81	-34.7%	124
6	**Առաջնային գրանցում**	3,298	0.6%	3,318	12.5%	2,949
7	**Պետգր. /վերագրանցում/**	1,816	-2.0%	1,780	1.4%	1,756
Ընդամենը /գործարք/		19,494	7.6%	20,984	11.7%	18,780

Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Աղյուսակ 1.1-3

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	**Օտարում**	8,179	39.0%	2,911	44.1%	35.6%	1,931	38.5%	23.6%	3,337	35.6%	40.8%
1ա	Առուվաճառք	5,587	26.6%	2,195	33.3%	39.3%	1,263	25.2%	22.6%	2,129	22.7%	38.1%
1բ	Նվիրատվություն	2,317	11.0%	618	9.4%	26.7%	613	12.2%	26.5%	1,086	11.6%	46.9%
1գ	Փոխանակում	47	0.2%	13	0.2%	27.7%	7	0.1%	14.9%	27	0.3%	57.4%
1դ	Օտարման այլ տեսակ	228	1.1%	85	1.3%	37.3%	48	1.0%	21.1%	95	1.0%	41.7%
2	**Վարձակալություն**	978	4.7%	611	9.3%	62.5%	151	3.0%	15.4%	216	2.3%	22.1%
3	**Գրավադրում**	3,291	15.7%	1,476	22.4%	44.8%	990	19.7%	30.1%	825	8.8%	25.1%
4	**Ժառանգություն**	3,357	16.0%	579	8.8%	17.2%	774	15.4%	23.1%	2,004	21.4%	59.7%
5	**Օրինականացում**	81	0.4%	16	0.2%	19.8%	18	0.4%	22.2%	47	0.5%	58.0%
6	**Առաջնային գրանցում**	3,318	15.8%	587	8.9%	17.7%	784	15.6%	23.6%	1,947	20.8%	58.7%
7	**Պետգր. /վերագրանցում/**	1,780	8.5%	414	6.3%	23.3%	371	7.4%	20.8%	995	10.6%	55.9%
Ընդամենը /գործարք/		20,984	100.0%	6,594	100.0%	31.4%	5,019	100.0%	23.9%	9,371	100.0%	44.7%

1.1.4 Հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.2 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.8 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-7-ում և Գծապատկեր 1.1-8-ում ներկայացված են 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.1-7



Գծապատկեր 1.1-8 .



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
1	Բնակարան	4,791	30.0%	6,228	20.4%	5,171
2	Անհատական բնակելի տուն	4,325	4.5%	4,521	6.2%	4,259
3	Արտադրական նշ. շին	342	10.5%	378	9.9%	344
4	Հասարակական նշ. շին.	1,416	7.7%	1,525	9.0%	1,399
5	Ավտոտնակ	918	3.7%	952	31.1%	726
6	Հող	7,702	-4.2%	7,380	7.3%	6,881
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	4,145	3.5%	4,291	10.4%	3,887
Ընդամենը		19,494	7.6%	20,984	11.7%	18,780

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 1.1-5

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանա տիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանա տիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանա տիպ գործարքներում
1	Բնակարան	6,228	29.7%	3,916	59.4%	62.9%	1,988	39.6%	31.9%	324	3.5%	5.2%
2	Անհատական բնակելի տուն	4,521	21.5%	709	10.8%	15.7%	1,101	21.9%	24.4%	2,711	28.9%	60.0%
3	Արտադրական նշ. շին	378	1.8%	138	2.1%	36.5%	89	1.8%	23.5%	151	1.6%	39.9%
4	Հասարակական նշ. շին.	1,525	7.3%	914	13.9%	59.9%	420	8.4%	27.5%	191	2.0%	12.5%
5	Ավտոտնակ	952	4.5%	628	9.5%	66.0%	242	4.8%	25.4%	82	0.9%	8.6%
6	Հող	7,380	35.2%	289	4.4%	3.9%	1,179	23.5%	16.0%	5,912	63.1%	80.1%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	4,291	20.4%	54	0.8%	1.3%	396	7.9%	9.2%	3,841	41.0%	89.5%
Ընդամենը /գործարք/		20,984	100.0%	6,594	100.0%	31.4%	5,019	100.0%	23.9%	9,371	100.0%	44.7%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արաբկիր՝ 22.0 %, իսկ ցածրը՝ 0.9 %, Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 1.2-1



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի օգոստոս**
Դավթաշեն	288	25.0%	360	75.6%	205
Էրեբունի	325	-4.9%	309	2.3%	302
Աջափնյակ	505	59.6%	806	31.1%	615
Ավան	237	38.4%	328	31.7%	249
Արաբկիր	818	77.5%	1,452	42.5%	1,019
Կենտրոն	888	9.9%	976	1.5%	962
Մալաթիա-Սեբաստիա	903	-29.1%	640	11.1%	576
Քանաքեռ-Զեյթուն	505	-14.3%	433	23.4%	351
Շենգավիթ	554	1.1%	560	10.7%	506
Նոր Նորք	478	11.5%	533	-2.6%	547
Նորք-Մարաշ	60	2.3 անգամ	138	1.5%	136
Նուբարաշեն	50	18.0%	59	47.5%	40
Երևան	5,611	17.5%	6,594	19.7%	5,508

1.2.2 Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 44.1 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.2 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ:

Աղյուսակ 1.2-2

Հ/Հ	Գործարքի տեսակ	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի օգոստոս**
1	**Օտարում**	2,333	24.8%	2,911	25.6%	2,317
1ա	Առուվաճառք	1,598	37.4%	2,195	40.4%	1,563
1բ	Նվիրատվություն	644	-4.0%	618	-5.4%	653
1գ	Փոխանակում	9	44.4%	13	-18.8%	16
1դ	Օտարման այլ տեսակ	82	3.7%	85	0.0%	85
2	**Վարձակալություն**	532	14.8%	611	24.7%	490
3	**Գրավադրում**	1,269	16.3%	1,476	12.6%	1,311
4	**Ժառանգություն**	607	-4.6%	579	8.2%	535
5	**Օրինականացում**	68	-76.5%	16	60.0%	10
6	**Առաջնային գրանցում**	379	54.9%	587	43.9%	408
7	**Պետգր. /վերագրանցում/**	423	-2.1%	414	-5.3%	437
	Ընդամենը /գործարք/	5,611	17.5%	6,594	19.7%	5,508

1.2.3 Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 59.4 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.1 %՝ արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.2-3



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
1	Բնակարան	3,089	26.8%	3,916	22.2%	3,205
2	Անհատական բնակելի տուն	830	-14.6%	709	-4.6%	743
3	Արտադրական նշ. շին	95	45.3%	138	17.9%	117
4	Հասարակական նշ. շին.	787	16.1%	914	19.2%	767
5	Ավտոտնակ	522	20.3%	628	49.2%	421
6	Հող	288	0.3%	289	13.3%	255
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	31	74.2%	54	8.0%	50
Ընդամենը		5,611	17.5%	6,594	19.7%	5,508

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2025 թվականի սեպտեմբերին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 36.6 %, գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.5 %՝ օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների.

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
1	**Օտարում**	4,819	9.3%	5,268	7.8%	4,885
1ա	Առուվաճառք	3,045	11.4%	3,392	13.9%	2,979
1բ	Նվիրատվություն	1,540	10.3%	1,699	-2.7%	1,747
1գ	Փոխանակում	69	-50.7%	34	21.4%	28
1դ	Օտարման այլ տեսակ	165	-13.3%	143	9.2%	131
2	**Վարձակալություն**	322	14.0%	367	-1.6%	373
3	**Գրավադրում**	1,402	29.5%	1,815	22.1%	1,486
4	**Ժառանգություն**	2,835	-2.0%	2,778	8.8%	2,554
5	**Օրինականացում**	193	-66.3%	65	-43.0%	114
6	**Առաջնային գրանցում**	2,919	-6.4%	2,731	7.5%	2,541
7	**Պետգր. /վերագրանցում/**	1,393	-1.9%	1,366	3.6%	1,319
	Ընդամենը /գործարք/	13,883	3.7%	14,390	8.4%	13,272

1.3.2 Մարզերում 2025 թվականի սեպտեմբերին ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 49.3 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.7 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-4

Հ/Հ	**Գույքի տեսակ**	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի օգոստոս**
1	Բնակարան	1,702	35.8%	2,312	17.6%	1,966
2	Անհատական բնակելի տուն	3,495	9.1%	3,812	8.4%	3,516
3	Արտադրական նշ. շին	247	-2.8%	240	5.7%	227
4	Հասարակական նշ. շին.	629	-2.9%	611	-3.3%	632
5	Ավտոտնակ	396	-18.2%	324	6.2%	305
6	Հող	7,414	-4.4%	7,091	7.0%	6,626
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	4,114	3.0%	4,237	10.4%	3,837
Ընդամենը		13,883	3.7%	14,390	8.4%	13,272

2 ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 8,179 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 39.0 %-ը:

2010-2025 թվականների սեպտեմբեր ամսվա անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.

Գծապատկեր 2.1-1



2.1.2 Հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 35.6 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.1 %՝ Վայոց ձորի մարզում:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 2.1-2



Գծապատկեր 2.1-3

Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 2.1-1

	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի օգոստոս**
Երևան	2,333	24.8%	2,911	25.6%	2,317
Արագածոտն	507	-16.6%	423	-19.4%	525
Արարատ	615	13.8%	700	19.9%	584
Արմավիր	560	40.2%	785	18.8%	661
Գեղարքունիք	345	-10.7%	308	1.3%	304
Լոռի	477	17.8%	562	23.0%	457
Կոտայք	1,166	28.1%	1,494	11.6%	1,339
Շիրակ	324	5.6%	342	1.8%	336
Սյունիք	293	-2.4%	286	14.4%	250
Վայոց ձոր	110	-17.3%	91	-13.3%	105
Տավուշ	422	-34.4%	277	-14.5%	324
Հանրապետություն	7,152	14.4%	8,179	13.6%	7,202

2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 13.6 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 14.4 %-ով, Երևան քաղաքում 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 25.6 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 24.8 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 6.0 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 5.8 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 8.9 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 11.5 %-ով:

2.1.3 Հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.3 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 0.8 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 2.1-4



Գծապատկեր 2.1-5



Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Աղյուսակ 2.1-2

Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	3,053	37.3%	2,047	70.3%	67.0%	845	43.8%	27.7%	161	4.8%	5.3%
2	Անհատական բնակելի տուն	1,404	17.2%	212	7.3%	15.1%	367	19.0%	26.1%	825	24.7%	58.8%
3	Արտադրական նշ. շին	68	0.8%	13	0.4%	19.1%	22	1.1%	32.4%	33	1.0%	48.5%
4	Հասարակական նշ. շին.	233	2.8%	116	4.0%	49.8%	88	4.6%	37.8%	29	0.9%	12.4%
5	Ավտոտնակ	610	7.5%	436	15.0%	71.5%	132	6.8%	21.6%	42	1.3%	6.9%
6	Հող	2,811	34.4%	87	3.0%	3.1%	477	24.7%	17.0%	2,247	67.3%	79.9%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	1,469	18.0%	16	0.5%	1.1%	142	7.4%	9.7%	1,311	39.3%	89.2%
	Ընդամենը /գործարք/	8,179	100.0%	2,911	100.0%	35.6%	1,931	100.0%	23.6%	3,337	100.0%	40.8%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Մարզեր	Ընդամենը
Առուվաճառք	2,195	260	453	553	150	338	1,051	195	183	67	142	3,392	5,587
Նվիրատվություն	618	152	227	219	120	184	400	146	99	22	130	1,699	2,317
Փոխանակում	13	0	6	3	1	11	13	0	0	0	0	34	47
Օտարման այլ տեսակ	85	11	14	10	37	29	30	1	4	2	5	143	228
Ընդամենը	2,911	423	700	785	308	562	1,494	342	286	91	277	5,268	8,179

3 ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 5,587 գործարք , որից 1,197-ը ձեռք է բերվել կառուցապատողից:

2010-2025 թվականների սեպտեմբեր ամսվա անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.

Գծապատկեր 3.1-1



3.1.2 Հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 39.3 %, գրանցվել է Երևան քաղաքում, իսկ առավել ցածրը՝ 1.2 %՝ Վայոց Ձորի մարզում

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 3.1-2



Գծապատկեր 3.1-3



Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-1

	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի օգոստոս**
Երևան	1,598	37.4%	2,195	40.4%	1,563
Արագածոտն	332	-21.7%	260	-9.4%	287
Արարատ	416	8.9%	453	17.4%	386
Արմավիր	380	45.5%	553	32.0%	419
Գեղարքունիք	154	-2.6%	150	31.6%	114
Լոռի	279	21.1%	338	29.5%	261
Կոտայք	792	32.7%	1,051	11.5%	943
Շիրակ	176	10.8%	195	-5.8%	207
Սյունիք	177	3.4%	183	36.6%	134
Վայոց ձոր	77	-13.0%	67	1.5%	66
Տավուշ	262	-45.8%	142	-12.3%	162
Հանրապետություն	4,643	20.3%	5,587	23.0%	4,542

Գծապատկեր 3.1-4-ում ներկայացված է 2010-2025 թվականների սեպտեմբեր ամսվա անշարժ գույքի նկատմամբ առուվաճառքի գրանցումների քանակները ըստ Երևան քաղաքի, մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերի.

Գծապատկեր 3.1-4



2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 23.0 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 20.3 %-ով, Երևան քաղաքում 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 40.4 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 37.4 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 12.2 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 11.4 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 14.9 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ ՝ 11.4 %-ով:

3.1.3 Հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 34.1 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 0.9 %, արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և Գծապատկեր 3.1-5-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.1-4



Գծապատկեր 3.1-5



Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.1-2

Հ/Հ	**Գույքի տեսակ**	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի օգոստոս**
1	Բնակարան	1,380	58.3%	2,185	35.0%	1,619
2	Անհատական բնակելի տուն	606	22.8%	744	14.8%	648
3	Արտադրական նշ. շին	55	-5.5%	52	2.0%	51
4	Հասարակական նշ. շին.	171	-8.2%	157	-1.9%	160
5	Ավտոտնակ	515	5.2%	542	45.3%	373
6	Հող	1,916	-0.5%	1,907	12.8%	1,691
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	852	2.3%	872	3.4%	843
Ընդամենը		4,643	20.3%	5,587	23.0%	4,542

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 2,195 գործարք, որից 1023-ը ձեռք է բերվել կառուցապատողից: Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափ՝ 33.0 %, արձանագրվել է Արաբկիր, իսկ առավել ցածրը՝ 0.6 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.2-1



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
Դավթաշեն	118	6.8%	126	2.2 անգամ	57
Էրեբունի	52	26.9%	66	4.8%	63
Աջափնյակ	121	99.2%	241	38.5%	174
Ավան	49	2.3 անգամ	114	39.0%	82
Արաբկիր	176	4.1 անգամ	724	82.8%	396
Կենտրոն	183	32.8%	243	8.5%	224
Մալաթիա-Սեբաստիա	421	-55.8%	186	17.7%	158
Քանաքեռ-Զեյթուն	230	-38.3%	142	46.4%	97
Շենգավիթ	104	36.5%	142	16.4%	122
Նոր Նորք	116	29.3%	150	-2.0%	153
Նորք-Մարաշ	13	3.6 անգամ	47	42.4%	33
Նուբարաշեն	15	-6.7%	14	3.5 անգամ	4
Երևան	1,598	37.4%	2,195	40.4%	1,563

3.2.2 Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 69.4 %, գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 0.5 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.2-2

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
1	Բնակարան	981	55.4%	1,524	44.9%	1,052
2	Անհատական բնակելի տուն	123	-7.3%	114	-19.1%	141
3	Արտադրական նշ. շին	11	-9.1%	10	-28.6%	14
4	Հասարակական նշ. շին.	88	-8.0%	81	12.5%	72
5	Ավտոտնակ	328	19.5%	392	75.8%	223
6	Հող	67	10.4%	74	21.3%	61
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	11	9.1%	12	-40.0%	20
Ընդամենը		1,598	37.4%	2,195	40.4%	1,563

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2025 թվականի սեպտեմբերին գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 3,392 գործարք, որից 174-ը ձեռք է բերվել կառուցապատողից : Մարզերում 2025 թվականի սեպտեմբերին առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 54.0 %, գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.2 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի.

Գծապատկեր3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.3-1

Հ/Հ	Գույքի տեսակ	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
1	Բնակարան	399	64.7%	657	15.9%	567
2	Անհատական բնակելի տուն	483	30.4%	630	24.3%	507
3	Արտադրական նշ. շին	44	-4.5%	42	13.5%	37
4	Հասարակական նշ. շին.	83	-8.4%	76	-13.6%	88
5	Ավտոտնակ	187	-17.6%	154	2.7%	150
6	Հող	1,849	-0.9%	1,833	12.5%	1,630
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	841	2.3%	860	4.5%	823
Ընդամենը		3,045	11.4%	3,392	13.9%	2,979

3.4 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրավաբանական անձանց կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի 1,325 առուվաճառքի գործարքների կողմ հանդիսացել են իրավաբանական անձինք, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 23.7 %-ը :

Վերոնշյալ առուվաճառքի գործարքներից 110-ի դեպքում իրավաբանական անձինք հանդիսացել են միայն գնորդ, 1175-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 40 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են իրավաբանական անձինք:

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված են իրավաբանական անձանց կողմից 2025 թվականի սեպտեմբերին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունները.

Գծապատկեր 3.4-1



Արդյունքում 2025 թվականի սեպտեմբերին իրավաբանական անձինք գնել են 150 միավոր անշարժ գույք և վաճառել են 1,215 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է իրավաբանական անձանց կողմից 2025 թվականի սեպտեմբերին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.4-3-ում՝ իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.4-2



Գծապատկեր 3.4-3



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ Երևանի և մարզերի.

Աղյուսակ 3.4-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	2,195	37	24.7%	1.7%	988	81.3%	45.0%
Արագածոտն	260	20	13.3%	7.7%	6	0.5%	2.3%
Արարատ	453	22	14.7%	4.9%	12	1.0%	2.6%
Արմավիր	553	13	8.7%	2.4%	7	0.6%	1.3%
Գեղարքունիք	150	4	2.7%	2.7%	4	0.3%	2.7%
Լոռի	338	10	6.7%	3.0%	1	0.1%	0.3%
Կոտայք	1,051	35	23.3%	3.3%	156	12.8%	14.8%
Շիրակ	195	0	0.0%	0.0%	3	0.2%	1.5%
Սյունիք	183	4	2.7%	2.2%	35	2.9%	19.1%
Վայոց Ձոր	67	2	1.3%	3.0%	1	0.1%	1.5%
Տավուշ	142	3	2.0%	2.1%	2	0.2%	1.4%
Հանրապետություն	5,587	150	100.0%	2.7%	1,215	100.0%	21.7%

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2025 թվականի օգոստոսի նկատմամբ.

Աղյուսակ 3.4-2

	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք				
	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխում	2025 թվականի օգոստոս	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
Երևան	59	-37.3%	37	-5.1%	39	575	71.8%	988	73.3%	570
Արագածոտն	40	-50.0%	20	11.1%	18	27	-77.8%	6	-33.3%	9
Արարատ	19	15.8%	22	83.3%	12	4	3.0 անհգամ	12	20.0%	10
Արմավիր	14	-7.1%	13	6.5 անհգամ	2	15	-53.3%	7	40.0%	5
Գեղարքունիք	10	-60.0%	4	0.0%	4	3	33.3%	4	-42.9%	7
Լոռի	11	-9.1%	10	-16.7%	12	4	-75.0%	1	-66.7%	3
Կոտայք	21	66.7%	35	-7.9%	38	27	5.8 անհգամ	156	0.0%	156
Շիրակ	8	8-ով պակաս	0	1-ով պակաս	1	5	-40.0%	3	-25.0%	4
Սյունիք	4	0.0%	4	-33.3%	6	33	6.1%	35	2.7 անհգամ	13
Վայոց Ձոր	3	-33.3%	2	-50.0%	4	1	0.0%	1	-50.0%	2
Տավուշ	10	-70.0%	3	-25.0%	4	41	-95.1%	2	0.0%	2
Հանրապետություն	199	-24.6%	150	7.1%	140	735	65.3%	1,215	55.6%	781

Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.4-3

Գույքի տեսակ		Առուվաճառքի գործարքների քանակ	Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք			Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	2,181	3	2.0%	0.1%	876	72.1%	40.2%
2	Անհատական բնակելի տուն	744	10	6.7%	1.3%	20	1.6%	2.7%
3	Արտադրական նշ. շին	52	11	7.3%	21.2%	7	0.6%	13.5%
4	Հասարակական նշ. շին.	157	14	9.3%	8.9%	28	2.3%	17.8%
5	Ավտոտնակ	546	8	5.3%	1.5%	252	20.7%	46.2%
6	Հող	1,907	104	69.3%	5.5%	32	2.6%	1.7%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	872	57	38.0%	6.5%	24	2.0%	2.8%
Ընդամենը		5,587	150	100.0%	2.7%	1,215	100.0%	21.7%

Աղյուսակ 3.4-4-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին իրավաբանական անձանց կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2025 թվականի օգոստոսի նկատմամբ.

Աղյուսակ 3.4-4

		Իրավաբանական անձանց կողմից գնված անշարժ գույք					Իրավաբանական անձանց կողմից վաճառված անշարժ գույք				
		2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
1	Բնակարան	16	-81.3%	3	-72.7%	11	355	2.5 անգամ	876	65.0%	531
2	Անհատական բնակելի տուն	22	-54.5%	10	-28.6%	14	41	-51.2%	20	-48.7%	39
3	Արտադրական նշ. շին.	8	37.5%	11	22.2%	9	11	-36.4%	7	-46.2%	13
4	Հասարակական նշ. շին.	20	-30.0%	14	7.7%	13	34	-17.6%	28	-12.5%	32
5	Ավտոտնակ	9	-11.1%	8	-11.1%	9	217	16.1%	252	93.8%	130
6	Հող	124	-16.1%	104	23.8%	84	77	-58.4%	32	-11.1%	36
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	68	-16.2%	57	-3.4%	59	40	-40.0%	24	84.6%	13
Ընդամենը		199	-24.6%	150	7.1%	140	735	65.3%	1,215	55.6%	781

3.5 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում օտարերկրյա քաղաքացիների կողմից իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

2025 թվականի սեպտեմբերին անշարժ գույքի 465 առուվաճառքի գործարքների կողմ են հանդիսացել օտարերկրյա քաղաքացիները, որը կազմել է առուվաճառքի ընդհանուր գործարքների 8.3 %-ը:

Առուվաճառքի գործարքներից 211-ի դեպքում օտարերկրյա քաղաքացիները հանդիսացել են միայն գնորդ, 237-ի դեպքում՝ միայն վաճառող, իսկ 17 առուվաճառքի գործարքի դեպքում գործարքի երկու կողմն էլ հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիները:

Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2025 թվականի սեպտեմբերին իրականացված առուվաճառքի գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը.

Գծապատկեր 3.5-1

Արդյունքում 2025 թվականի սեպտեմբերին օտարերկրյա քաղաքացիները գնել են 228 միավոր անշարժ գույք և վաճառել են 254 միավոր անշարժ գույք:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է օտարերկրյա քաղաքացիների կողմից 2025 թվականի սեպտեմբերին գնված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների, իսկ Գծապատկեր 3.5-3-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 3.5-2



Գծապատկեր 3.5-3

Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը առուվաճառքների գործարքներում ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Աղյուսակ 3.5-1

	Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
		քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
Երևան	2,195	137	60.1%	6.2%	76	29.9%	3.5%
Արագածոտն	260	3	1.3%	1.2%	15	5.9%	5.8%
Արարատ	453	5	2.2%	1.1%	18	7.1%	4.0%
Արմավիր	553	9	3.9%	1.6%	30	11.8%	5.4%
Գեղարքունիք	150	5	2.2%	3.3%	13	5.1%	8.7%
Լոռի	338	12	5.3%	3.6%	21	8.3%	6.2%
Կոտայք	1,051	36	15.8%	3.4%	28	11.0%	2.7%
Շիրակ	195	13	5.7%	6.7%	27	10.6%	13.8%
Սյունիք	183	1	0.4%	0.5%	8	3.1%	4.4%
Վայոց Ձոր	67	2	0.9%	3.0%	5	2.0%	7.5%
Տավուշ	142	5	2.2%	3.5%	13	5.1%	9.2%
Հանրապետություն	5,587	228	100.0%	4.1%	254	100.0%	4.5%

Աղյուսակ 3.5-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-2

	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
Երևան	95	44.2%	137	80.3%	76	61	24.6%	76	-2.6%	78
Արագածոտն	8	-62.5%	3	-50.0%	6	10	50.0%	15	50.0%	10
Արարատ	5	0.0%	5	-28.6%	7	20	-10.0%	18	-18.2%	22
Արմավիր	13	-30.8%	9	28.6%	7	26	15.4%	30	3.4%	29
Գեղարքունիք	2	2.5 անգամ	5	66.7%	3	5	2.6 անգամ	13	3.3 անգամ	4
Լոռի	6	2.0 անգամ	12	4.0 անգամ	3	16	31.3%	21	16.7%	18
Կոտայք	13	2.8 անգամ	36	28.6%	28	31	-9.7%	28	-26.3%	38
Շիրակ	6	2.2 անգամ	13	4.3 անգամ	3	10	2.7 անգամ	27	-3.6%	28
Սյունիք	1	0.0%	1	1-ով ավել	0	6	33.3%	8	60.0%	5
Վայոց Ձոր	0	2-ով ավել	2	2-ով ավել	0	3	66.7%	5	66.7%	3
Տավուշ	4	25.0%	5	-44.4%	9	10	30.0%	13	-38.1%	21
Հանրապետություն	153	49.0%	228	60.6%	142	198	28.3%	254	-0.8%	256

Աղյուսակ 3.5-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի համամասնությունը հանրապետությունում գրանցված առուվաճառքների գործարքներում ըստ գույքի տեսակների.

Աղյուսակ 3.5-3

Գույքի տեսակ		Առուվաճառքի գործարքների քանակ	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք			Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք		
			քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Բնակարան	2,185	116	50.9%	5.3%	115	45.3%	5.3%
2	Անհատական բնակելի տուն	744	43	18.9%	5.8%	54	21.3%	7.3%
3	Արտադրական նշ. շին	52	2	0.9%	3.8%	0	0.0%	0.0%
4	Հասարակական նշ. շին.	157	7	3.1%	4.5%	5	2.0%	3.2%
5	Ավտոտնակ	542	30	13.2%	5.5%	4	1.6%	0.7%
6	Հող	1,907	30	13.2%	1.6%	76	29.9%	4.0%
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	872	0	0.0%	0.0%	35	13.8%	4.0%
Ընդամենը		5,587	228	100.0%	4.1%	254	100.0%	4.5%

Աղյուսակ 3.5-4-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-4

		Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
		2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
1	Բնակարան	72	61.1%	116	87.1%	62	69	66.7%	115	9.5%	105
2	Անհատական բնակելի տուն	28	53.6%	43	104.8%	21	49	10.2%	54	-6.9%	58
3	Արտադրական նշ. շին.	1	2.0 անգամ	2	2-ով ավել	0	0	0.0%	0	0.0%	0
4	Հասարակական նշ. շին.	8	-12.5%	7	75.0%	4	8	-37.5%	5	25.0%	4
5	Ավտոտնակ	19	57.9%	30	57.9%	19	8	-50.0%	4	-20.0%	5
6	Հող	25	20.0%	30	-16.7%	36	64	18.8%	76	-9.5%	84
6ա	Ա/թ գյուղատնտ. նշ. հող	0	0.0%	0	0.0%	0	23	52.2%	35	-16.7%	42
Ընդամենը		153	49.0%	228	60.6%	142	198	28.3%	254	-0.8%	256

Աղյուսակ 3.5-5-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված, իսկ Աղյուսակ 3.5-6-ում՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույքերի համամասնությունները ըստ պետությունների և տարածաշրջանների:

Աղյուսակ 3.5-5

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ.նշ	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	73	31	2	5	23	21	0	155
ԱՄՆ	14	4	0	2	4	3	0	27
Իրան	2	0	0	0	1	1	0	4
Սիրիա	1	0	0	0	0	0	0	1
Եվրոպական պետություններ	13	3	0	0	0	1	0	17
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	9	2	0	0	2	0	0	13
Այլ պետություններ	4	3	0	0	0	4	0	11
ԸՆԴԱՄԵՆԸ	116	43	2	7	30	30	0	228

Աղյուսակ 3.5-6

Պետության անվանումը	Բնակարան	Բնակելի տուն	Արտադ. նշ. շին.	Հասար. նշ. շին.	Ավտոտնակ	Հող	ա/թ գյուղ.նշ	Ընդամենը
Ռուսաստանի Դաշնություն	83	37	0	1	3	58	34	182
ԱՄՆ	13	8	0	1	1	6	0	29
Իրան	5	2	0	2	0	2	0	11
Սիրիա	0	0	0	0	0	0	0	0
Եվրոպական պետություններ	6	3	0	1	0	4	1	14
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	6	3	0	0	0	1	0	10
Այլ պետություններ	2	1	0	0	0	5	0	8
ԸՆԴԱՄԵՆԸ	115	54	0	5	4	76	35	254

Աղյուսակ 3.5-7-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված և վաճառված անշարժ գույքերի քանակական

համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.5-7

Պետության անվանումը	Օտարերկրյա քաղաքացիների կողմից գնված անշարժ գույք					Օտարերկրյա քաղաքացիների կողմից վաճառված անշարժ գույք				
	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
Ռուսաստանի Դաշնություն	100	55.0%	155	66.7%	93	156	16.7%	182	-5.7%	193
ԱՄՆ	15	80.0%	27	2.1 անգամ	13	12	2.4 անգամ	29	2.1 անգամ	14
Իրան	3	33.3%	4	0.0%	4	6	83.3%	11	57.1%	7
Սիրիա	1	0.0%	1	1-ով ավել	0	0	0.0%	0	0.0%	0
Եվրոպական պետություններ	23	-26.1%	17	-15.0%	20	15	-6.7%	14	-36.4%	22
ԱՊՀ պետություններ, բացառությամբ ՌԴ	7	85.7%	13	85.7%	7	8	25.0%	10	-37.5%	16
Այլ պետություններ	4	2.8 անգամ	11	2.2 անգամ	5	1	8.0 անգամ	8	2.0 անգամ	4
ԸՆԴԱՄԵՆԸ	153	49.0%	228	60.6%	142	198	28.3%	254	-0.8%	256

3.6 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.6.1 Հանրապետությունում 2025 թվականի սեպտեմբերին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 2,181 գործարք, որից 864-ը ձեռք է բերվել կառուցապատողից: 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 34.7 %-ով, 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 58.0 %-ով:

Գծապատկեր 3.6-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևան քաղաքի և մարզերի.

Գծապատկեր 3.6-1



Աղյուսակ 3.6-1-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2024 թվականի սեպտեմբեր և 2025 թվականի օգոստոս ամիսների նկատմամբ.

Աղյուսակ 3.6-1

	2024 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի սեպտեմբեր**	**փոփոխումը**	2025 **թվականի օգոստոս**
Երևան	981	55.4%	1,524	44.9%	1,052
Արագածոտն	10	30.0%	13	85.7%	7
Արարատ	27	-3.7%	26	-23.5%	34
Արմավիր	30	2.7 անգամ	81	14.1%	71
Գեղարքունիք	23	47.8%	34	78.9%	19
Լոռի	70	51.4%	106	32.5%	80
Կոտայք	77	3.1 անգամ	237	5.3%	225
Շիրակ	64	-6.3%	60	13.2%	53
Սյունիք	42	73.8%	73	37.7%	53
Վայոց ձոր	8	75.0%	14	55.6%	9
Տավուշ	48	-72.9%	13	-18.8%	16
Հանրապետություն	1,380	58.0%	2,181	34.7%	1,619

3.6.2 Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1,524 գործարք, որից 716-ը ձեռք է բերվել կառուցապատողից , 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 44.9 %-ով, իսկ 2024 թվականի սեպտեմբերի համեմատ՝ 55.4 %-ով:

Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափ՝ 32.7-

%, արձանագրվել է Արաբկիր, իսկ առավել ցածրը՝ 0.1 %՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.6-2-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.6-2



Աղյուսակ 3.6-2-ում ներկայացված են 2025 թվականի սեպտեմբեր ամսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով, ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների.

Աղյուսակ 3.6-2

Վարչական շրջան	2024 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի սեպտեմբեր	փոփոխումը	2025 թվականի օգոստոս
Կենտրոն միջին	908,100	-0.9%	900,000	2.2%	881,000
Կենտրոն (Գոտի 1)	1,120,500	-0.4%	1,115,600	0.2%	1,113,500
Կենտրոն (Գոտի 2)	943,700	5.8%	998,700	0.2%	996,600
Կենտրոն (Գոտի 3)	833,000	-1.2%	822,700	1.1%	813,600
Կենտրոն (Գոտի 4)	693,800	-5.3%	657,050	1.1%	650,000
Կենտրոն (Գոտի 5)	602,000	-9.5%	545,000	0.0%	545,000
Արաբկիր միջին	637,800	-1.2%	630,000	1.5%	620,500

Արաբկիր (Գոտի 3)	670,000	6.0%	710,000	2.1%	695,300
Արաբկիր (Գոտի 4)	620,100	0.6%	623,800	-1.0%	630,000
Արաբկիր (Գոտի 5)	663,000	-7.1%	616,000	0.2%	614,800
Արաբկիր (Գոտի 7)	521,500	-4.1%	500,000	2.2%	489,000
Քանաքեռ-Զեյթուն միջին	444,500	0.3%	446,000	0.8%	442,500
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 4)	473,100	3.6%	490,000	1.0%	485,300
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 5)	449,500	6.8%	480,000	2.5%	468,400
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 6)	443,600	0.3%	445,000	3.0%	431,900
Քանաքեռ-Զեյթուն (Գոտի 7)	386,500	-3.5%	372,800	-1.4%	378,100
Նոր-Նորք միջին	405,000	2.8%	416,200	0.4%	414,500
Նոր-Նորք (Գոտի 5)	439,000	3.2%	453,000	1.1%	448,000
Նոր-Նորք (Գոտի 6)	401,500	4.7%	420,500	1.0%	416,500
Նոր-Նորք (Գոտի 7)	362,000	6.5%	385,400	0.9%	382,000
Նոր-Նորք (Գոտի 8)	346,100	-1.0%	342,700	-3.6%	355,500
Էրեբունի միջին	411,000	-2.4%	401,000	0.0%	401,000
Էրեբունի (Գոտի 5)	421,100	7.5%	452,600	0.3%	451,300
Էրեբունի (Գոտի 6)	415,050	3.8%	430,800	-1.0%	435,000
Էրեբունի (Գոտի 7)	411,500	2.1%	420,000	0.9%	416,250
Էրեբունի (Գոտի 8)	363,000	-1.3%	358,200	-1.1%	362,100
Էրեբունի (Գոտի 9)	332,800	-8.9%	303,100	3.4%	293,000
Շենգավիթ միջին	404,000	-2.6%	393,500	0.6%	391,000
Շենգավիթ (Գոտի 5)	433,000	2.8%	445,000	0.8%	441,400
Շենգավիթ (Գոտի 6)	406,300	3.4%	420,000	1.4%	414,100
Շենգավիթ (Գոտի 7)	400,100	-0.6%	397,800	0.0%	397,800
Շենգավիթ (Գոտի 8)	385,200	-3.9%	370,000	1.4%	365,000
Շենգավիթ (Գոտի 9)	333,000	2.1%	340,000	1.1%	336,400
Դավթաշեն միջին	481,500	-2.0%	472,100	-0.6%	475,000
Դավթաշեն (Գոտի 5)	501,000	-6.5%	468,600	-0.8%	472,500
Դավթաշեն (Գոտի 7)	470,000	-8.5%	430,000	-5.5%	455,000
Դավթաշեն (Գոտի 8)	452,200	-0.5%	450,000	0.0%	450,000
Աջափնյակ միջին	414,600	1.3%	420,000	0.6%	417,500
Աջափնյակ (Գոտի 5)	436,000	6.9%	466,200	2.4%	455,200
Աջափնյակ (Գոտի 6)	425,200	5.6%	448,800	0.3%	447,300
Աջափնյակ (Գոտի 7)	380,500	8.0%	410,900	2.9%	399,400
Աջափնյակ (Գոտի 8)	308,300	3.8%	320,000	3.2%	310,000
Մալաթիա-Սեբաստիա միջին	394,100	-0.5%	392,000	0.4%	390,500
Մալաթիա–Սեբաստիա (Գոտի 5)	580,000	-14.7%	495,000	0.8%	491,200
Մալաթիա–Սեբաստիա (Գոտի 6)	394,000	2.0%	401,900	-0.4%	403,500
Մալաթիա–Սեբաստիա (Գոտի 7)	420,100	4.3%	438,000	-1.2%	443,100
Մալաթիա–Սեբաստիա (Գոտի 9)	349,000	-1.1%	345,000	2.0%	338,100
Ավան միջին	402,000	-1.5%	396,000	0.5%	394,100
Ավան (Գոտի 5)	458,200	-8.3%	420,000	-3.0%	433,000
Ավան (Գոտի 6)	428,100	0.4%	430,000	1.7%	423,000
Ավան (Գոտի 7)	384,100	6.7%	410,000	2.0%	402,100
Ավան (Գոտի 8)	313,000	2.9%	322,000	1.9%	316,000

Նորք-Մարաշ	N/A	N/A	452,000	0.3%	450,500
Նորք-Մարաշ (Գոտի 5)	N/A	N/A	530,000	-6.3%	565,700
Նորք-Մարաշ (Գոտի 6)	N/A	N/A	435,000	4.4%	416,500
Նուբարաշեն միջին	231,100	3.6%	239,400	1.0%	237,000
Նուբարաշեն (Գոտի 10)	240,000	3.0%	247,100	1.3%	244,000
Նուբարաշեն (Գոտի 11)	223,000	3.6%	231,000	0.4%	230,000

Գնային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² ամակերեսի հշվարկով, շուկայական միջին գները 2025 թվականի օգոստոսի համեմատ աճել է 0.8%-ով, իսկ 2024 թվականի սեպտեմբերի համեմատ նվազել՝ 0.5%-ով:

Ծանոթություն

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման գոտիների:

*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել

*սեպտեմբեր ամսվա վերլուծության մեջ ներառվել է նաև Նորք-Մարաշ վարչական շրջանը, սակայն այն ընդգրկված չէ Երևան քաղաքի շուկայական միջին գների հաշվարկում, քանի որ համեմատականներ առկա չեն:

2025 թվականի սեպտեմբեր ամսին Երևան քաղաքում իրականացված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 1,524 գործարք որից 716 միավոր ձեռք է բերվել կառուցապատողից:

Գծապատկեր 3.6-3-ում ներկայացված է 2025 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ մասնավոր անձանց միջև և կառուցապատողից ձեռք բերված.

Գծապատկեր 3.6-3



Գծապատկեր 3.6-4-ում ներկայացված է Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբեր ամսին կառուցապատողից գնված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի գործարքների քանակները.

Գծապատկեր 3.6-4



Երևան քաղաքում 2025 թվականի սեպտեմբեր ամսին կառուցապատողից գնված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի գործարքների առավել բարձր քանակը՝ 49.3 %-ը գրանցվել է Արաբկիր, իսկ առավել ցածրը՝ 1.0 % Նոր Նորք վարչական շրջաններում: Նուբարաշեն և Էրեբունի վարչական շրջաններում սեպտեմբեր ամսին կառուցապատողից գնված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գրանցված առուվաճառքի գործարքներ չեն գրանցվել :

